

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏՄԱՍ  
ԲԱԺՆԻՆ ԿԻՑ 1933 Թ. ԴԵԿՏԵՄ-  
ԲԵՐԻ 10—12-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՄՏԿ  
ՔԱՂԱՏԻՆՆԵՐԻ ԿԻՆ-ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊՉՈՒՀԻՆԵՐԻ ՏԵՎ ԶՐԶԿՈՄ-  
ՆԵՐԻ ԿԻՆ ՍԵԿՏՈՐՆԵՐԻ ՎԱՐԻՉ-  
ՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԸ-  
ԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ

□

338.1  
Z-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
Պ. Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԻՆՏԵՆՏ

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՂԻՏՄԱՍ ԲԱԺՆԻՆ ԿԻՅ 1933 Թ. ԳԵԿՏԵՐԵՐԻ  
 10—12-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՄՏԿ ԲԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԻՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՁՈՒՀԻ-  
 ՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԿՈՄՆԵՐԻ ԿԻՆՍԵԿՏՈՐՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱ-  
 ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎՐ  
 (Հաստատված ՀԿ(Բ)Կ գննահովի կողմից)

338.1  
 2-24 *um*

2676  
 1006  
 28124

1) 2-րդ հնգամյակի առաջին տարվա գյուղատնտեսության պլանների կատարման բնագավառում Հայաստանի կուս. կազմակերպությունները՝ Համ. Կ(Բ)Կ Մնղրյերկումի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ ձեռք են բերել փայլուն հաջողություններ: Հացի, բամբակի, ծխախոտի, կաթնամթերքների, խոտի և մյուս հիմնական գյուղատնտեսական մթերքների մթերման պլանները կատարված և գերակատարված են ժամկետից շուտ: Գանձված և սերմֆոնդը և ապահովագրական ֆոնդը, հաջողությամբ կատարված և աշնանացանը:

Այս բոլոր նվաճումները ՀԿ(Բ) կուսակցությունը ձեռք է բերել ջախջախելով զասակարգային թշնամու դիմադրությունը, կուլակային սաբոտաժը, անհաշտ պայքար մղելով աջ ոպորտունիզմի, ինչպես և «ձախ» խոտորումների դեմ:

Այս վերջին տարվա ընթացքում մեծ աշխատանք է ծավալված ՄՏԿ քաղբաժինների կողմից գյուղում կուս. բլիժների աշխատանքների վերակառուցման և աշխուժացման բնագավառում:

Չտեսնված խանդավառությամբ, կուսակցության և կառավարության առաջադրանքների կատարման

Մտադրի Ա. Ց-Միջլյան  
 Հանձնված է արտադրության 16 հունվարի 1934 թ.  
 Ստացված է արտադրության 25 հունվարի 1934 թ.  
 Փյավիթ 7812(Բ). Հրատ. № 175.  
 Պատվեր № 19. Տիրած 500. 30,000 տպ. հո.  
 Գուսերտի պարտն. Յեռնված.

բումը փառքի և պատվի գործ զարձնելով, սոցիալիս-  
տական աշխատանքի լավագույն ձևերը գործադրելով  
գյուղատնտեսական աշխատանքների բոլոր ճակա-  
տամասերում՝ կոլտնտեսությունների դաշտերում,  
բրիգադներում, ցանքի, մշակման, բերքահավաքի  
բնագավառում՝ կոլտնտեսություններն ու աշխատա-  
վոր մենատնտեսները ժամանակից շուտ ավարտե-  
ցին գյուղատնտեսական հիմնական աշխատանքները  
և ստացան առատ բերք: Հարյուրավոր, հազարա-  
վոր կոլտնտեսականներ զարձան ունևորներ, կոլ-  
տնտեսություններն ամրապնդվեցին տնտեսապես  
և կազմակերպչորեն, նոր հոսանք սկսվեց գեպի կոլ-  
տնտեսությունները, և լուրջ քայլեր արվեցին կոլ-  
տնտեսությունները բոլշևիկյան՝ ու կոլտնտեսա-  
կաններին ունևոր զարձնելու ուղղությամբ:

Կասկածից զուրս ե, վոր աշխատավոր կանանց  
լայն մասսաները մեծ դեր խաղացին գյուղատնտե-  
սական աշխատանքները ժամանակին կատարելու  
գործում: Սկսած գարնանացանից, այս տարի ավելի  
մեծ չափով և ավելի ակտիվ կերպով քան անցյալ  
տարիները, աշխատավոր կանայք լծվեցին գյուղա-  
տնտեսական բոլոր տեսակի աշխատանքներին, բուռն  
վոզևորությամբ ծավալելով սոցմրցումն ու հար-  
վածայնությունը, տանելով իրենց հետևից հարյու-  
րավոր հետամնացների: Բամբակի դաշտերում, ծխա-  
խոտի և այլ կուլտուրաների մշակույթների ժամա-  
նակ կանայք հերոսական աշխատանք կատարեցին,  
գրավելով տղամարդկանց հետ հավասար առաջավոր  
դիրքերը (Վաղպատ, Վեդի, Ղամարլու, Լենինական  
և այլն): Մանգաղավոր, գերանգավոր կանանց թիվը  
հասավ հարյուրների՝ հացահատիկային կուլտուրա-

ների բերքահավաքի ժամանակ (Արթիկ, Դավալու, Լե-  
նինական և այլն): Մի շարք շրջաններում հարվա-  
ծային կանանց թիվը գերակշռեց հարվածային  
տղամարդկանց թվին (Ղուրղուղուլի, Վաղարշա-  
պատ, Ղամարլու): Այս տարի կանանց բանուժը հիմ-  
նականում ամրապնդվեց կոլտնտեսություններում,  
բրիգադներում՝ վորպես մշտական բանվորական  
ուժ: Կոլտնտեսությունների բրիգադներում աշխատա-  
վոր կանանց կողմից լայն չափով կիրառվեց ան-  
հատական գործարքային ձևը:

1933 թ. ընթացքում ծավալվեց քաղմասսայա-  
կան աշխատանքը կոլտնտեսուհիների և մենատըն-  
տեսուհիների մեջ: Առանձնապես մասսայականաց-  
վեցին հունվարյան պլենումի վորոշումները, ընկ.  
Ստալինի ճառը (արտասանած հարվ. կոլտնտեսական-  
ների 1-ին համագումարում), ՀամԿ(բ)Կ Կենտկո-  
մի մարտի 5-ի, ինչպես և Մնզրյերկոմի ու Հայկոմ-  
կուսի Կենտկոմի վորոշումները: Համարյա բոլոր  
շրջաններում կազմակերպվեցին հատուկ կուսորեր,  
քաղորեր՝ աշխատավոր կանանց լայն շրջաններում  
մասսայականացնելու կուսակցության վորոշում-  
ները:

Այս տարի լայն չափերի հասան կոլտնտեսուհի-  
ների, մենատնտեսուհիների հավաքույթները, խոր-  
հրդակցությունները (50-ից ավելի հավաքներ, մաս-  
նակցությամբ մոտ 5000 կանանց): Կոլտնտեսուհի-  
ները, մենատնտեսուհիները մորբիլիգացիայի յեն-  
թարկվեցին կուսակցության հիմնական խնդիրնե-  
րի շուրջը և իրենց ակտիվ մասնակցությամբ ոգնե-  
ցին առաջին բոլշևիկյան գարնանացանի պլաննե-  
րի կատարմանը:

Պատժողովների վերակառուցումն ըստ արտադրական սկզբունքի, պատգամավորուհիների վերադասավորումն ըստ կոլտնտեսային բրիգադների, ողակների և այլն, աշխատավոր կանանց՝ կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների մեջ առաջացրին չտեսնված ակտիվություն և շրջադարձ դեպի կոլեկտիվ աշխատանքը:

Սակայն այդ նվաճումների հետ մեկտեղ կանանց մեջ կատարվող աշխատանքների բնագավառում 1933 թ. ընթացքում մենք ունեցանք մի շարք բացեր: Առանձին շրջաններում՝ Սիստա, Սղբաբա, Քեշիշքենդ, Մարտունի, — կուսակազմակերպությունների թույլ դեկավարություն հետևանքով կանանց բանուժը լրիվ չափով չընդգրկվեց կոլտնտեսություններում, առանձնապես կանանց բանուժը թույլ և ընդգրկված անասնապահության բնագավառում: Կանանց աշխորների հաշվառման, կուլտ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ անբավարար աշխատանք կատարվեց: Թույլ և տարվել աշխատանքը տեղերում կոլտնտեսուհիներին լրիվ չափով մասնակից դարձնելու կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցություններին, կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներին:

Կանանց անգրագիտության վերացման գործը տեղերում դեռ շատ վատ և զրված. չեն ստեղծվում անհրաժեշտ պայմաններ (մանկական սենյակներ, անհատական և թաղային խմբակներ և այլն) կանանց անգրագիտությունն իսպառվերացնելու համար:

Յեղնելով առաջիկա հսկայական խնդիրներից, խորհրդակցությունն անհրաժեշտ և գտնում

1. ա) Ուժեղացնել տեղերում կուս. բջիջների

դեկավարությունը կանանց մեջ կատարվող աշխատանքի վրա: Կուսշրջկոմները և ՄՏԿ քաղբաժինները պետք է կուս. պատասխանատվության յենթարկեն այն կոմ. բջիջներին և առանձին կոմունիստներին, վորոնք թերազնահատում են, անտես են առնում, ձախողում են կանանց մեջ տարվող աշխատանքները:

բ) Կլինսեկտորները վարիչներին, քաղբաժինների կազմակերպչուհիներին՝ անհրաժեշտ է լայն մասսայական աշխատանք ծավալել տեղերում, կազմակերպել կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների հավաքներ, խորհրդակցություններ, աշխատավոր կանանց լայն մասսաներին լուսաբանելու կուսակցությունների կողմից առաջադրված խնդիրները: Կազմակերպել նրանց՝ զարնանացանի և գյուղատնտեսական այլ աշխատանքներին ակտիվ մասնակից դարձնելու համար:

գ) Տեղերում կազմակերպված քաղորդերին լայն չափով ընդգրկել կոլտնտեսուհիներին, մենատնտեսուհիներին: Հարկ յեղած գեպքում կազմակերպել հատուկ քաղորդեր, կուսորդեր — կուսակցության առաջադրած խնդիրների, ինչպես և կանանց աշխատանքի և կուլտկենցաղային հարցերի վերաբերյալ: Տեղերում աշխատանքը կազմակերպել այնպես, վոր կուս. բջիջի զանբաց նիստերին կոլտնտեսուհիները, մենատնտեսուհիներն ակտիվ մասնակցություն ցույց տան:

դ) Կուս. շրջկոմների կլինսեկտորի վարիչները, քաղբաժինների կլինկազմակերպչուհիները պետք է լայն բացատրական աշխատանք տանեն առանձնապես կանանց հետամուտ մասսաների՝ մենատնտեսուհի-

ների մեջ, լուսաբանելով կոլեկտիվ աշխատանքի ար-  
դյունքները— առատ բերք, բարեկեցիկ, կուլտուրա-  
կան կյանք կոլտնտեսականների համար, և նման մաս-  
սայական աշխատանքների միջոցով ստեղծել նոր  
վերելք կոլտնտ. շինարարության բնագավառում:

2. ա) Արձանագրել, վոր անցյալներում կա-  
նանց բանուժը կոլտնտեսություններում ամրա-  
պնդելու բնագավառում ունեցել ենք մեծ բացեր.  
այս տարի կոլտնտեսությունների արտադարական  
պլանները կազմելու ժամանակ առանձին ուշա-  
գրություն պետք է դարձնել, վորպեսզի վոչ մի  
աշխատունակ կոլտնտեսուհի բրիգադներից գուրս  
չմնա: Պետք է ընդգրկել նրանց բոլոր արտադրա-  
կան բրիգադներում, վորպես մշտական բանուժ և  
վոչ վորպես սոսկ ոժանդակ ուժ, ինչպես յեղել է  
անցյալում:

բ) Կանանց աշխատանքը կոլտնտեսություննե-  
րում պետք է կազմակերպել այնպես, վոր կոլ-  
տնտեսուհիները վոչ միայն հողի մշակման, բերքա-  
հավաքի, այլ և գարնանացանի աշխատանքներին  
լայն մասնակցություն ունենան:

գ) Արձանագրել, վոր կանանց աշխուրների հաշվա-  
ռումը մինչև այժմ կատարվել է չափազանց անկանոն  
թե հաշվապահության մատյաններում և թե  
նրանց աշխարհույկներում: Կանանց աշխուրերը սո-  
վորաբար գրանցվում են ընտանիքի անդամների, գր-  
խափորպես ամուսնու աշխարհույկում. այս յերե-  
վույթին վերջ տալու նպատակով Հոգժողկոմատը  
պետք է տեղերին խիստ հրահանգ տա կանանց  
աշխուրերի հաշվառումն առանձնացնելու, բոլոր  
կոլտնտեսուհիներին աշխարհույկներով ապահովելու

և աշխուրի գրանցումը կանոնավորելու վերաբե-  
րյալ:

դ) Նշել, վոր ակտիվ հարվածային կոլտնտե-  
սուհիների մեջ մինչև այժմ առանձին աշխատանք  
չի տարվել կուսկազմակերպիչների կողմից: Կին-  
սեկտորի վարիչները, ՄՏԿ քաղբաժնի կինկազմա-  
կերպչուհիները պետք է այս ուղղությամբ ուժեղ  
աշխատանք տանեն, կանոնավորելով հարվածային  
կոլտնտեսուհիների հաշվառումը, տեղերում կոլտն-  
տեսություններում հարվածային կոլտնտեսուհիներ-  
րից կազմակերպելով ակտիվ կանանց կորիզ: Կազ-  
մակերպել հարվածային կոլտնտեսուհիների լավա-  
գույն աշխատանքների մասսայականացման գործը,  
գործադրել հարվածային կոլտնտեսուհիներին խրա-  
խուսելու բոլոր միջոցները, համախմբել նրանց կոլ-  
տնտեսության արտադրական պլանները հաշվու-  
թյամբ կատարելու շուրջը:

3. ա) Անասնապահության զարգացման բնագա-  
վառում աշխատավոր կանայք մեծ անելիքներ ունեն,  
սակայն մինչև այժմ չափազանց թույլ է կանանց  
ներգրավումը անասնապահական ֆերմաներում,  
առանձին բրիգադներում: Այժմյանից պետք է աշ-  
խատանք ծավալել տեղերում կանանց ընդգրկելու  
անասունները խնամելու, մատղաշների պահպան-  
ման, կովկիթների բրիգադներում: Կանանց մեջ  
լայն աշխատանք կազմակերպել նրանց գուրս բե-  
րելու պայքարի՝ կերի բազա ստեղծելու, տաք, մա-  
քուր գոմեր ունենալու, մատղաշները լավ խնամե-  
լու, կերը խնայողությամբ գործածելու, մատղաշ-  
ների սատկելու տոկոսն իջեցնելու համար:

բ) Անասնապահության բնագավառում գոյու-

թյուն ունեցող դիմադրելու թյունը վերացնելու նպատակով՝ անհրաժեշտ է հենց զարնան սկզբից, ծննդի կամ պանիայից կոլտնտեսուհիներին ամրացնել մշտական բրիգադներում, պայքարել կանանց մի բրիգադից մյուսը փոխադրելու դեմ, այսպիսով բարձրացնելով անասնապահության բնագավառում աշխատողների պատասխանատվությունը:

գ) Անասնապահության զարգացման զլխավոր խնդիրներից մեկը համարելով հզի անասունների խնամքը, առանձին աշխատանք պետք է տանել անասունների հղիության ամբողջ ժամանակաշրջանում գտնելով տաքություն, սանիտարական անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար: Առանձնապես նորածին անասունները խնամելու խընդիրը զարձնել կոլտնտեսուհիների անմիջական գործը, բարձրացնելով նրանց պատասխանատվությունն այս խնդրում, նկատի ունենալով, փոր անասնապահության զարգացումը մեծապես կախված է մատղաշ անասունների խնամքից՝ նրանց ժամանակին կերակրելու, մաքրություն պահպանելու և նման հոգատարությունից:

դ) Անասնապահության զարգացման, ինչպես և կոլտնտեսականների նյութական դրություն բարելավման միջոցներից մեկը համարելով կովազուրկ կոլտնտեսականներին մատղաշներ տրամադրելը, Համկոմկուսի Կենտկոմի և ժողկոմխորհի այդ մասին յեղած փորոշման կենսագործումը պահանջում է մեր բոլոր կուս. կազմակերպություններից, Հոգաժիններից, ՄՏԿ քաղբաժիններից—այս ուղղությամբ լայն աշխատանք տանել:

Կինսեկտորի վարիչները, քաղբաժնի կինկազմա-

կերպչուհիները պետք է ուժեղ աշխատանք տանեն այս ուղղությամբ՝ կովազուրկ կոլտնտեսուհիներին ուժանդակելու կով ձեռք բերելու գործում:

4. ա) Կանանց մասսայական կազրերի պատրաստման և առաջըաշման բնագավառում 1933 թ. ընթացքում շրջաններում մեծ աշխատանք է տարված (բոլոր գծերով նախապատրաստված են տեղերում աշխատելու համար 4182 կին), սակայն համեմատած գյուղի ներկայիս պահանջներին, կանանցից կազրեր պատրաստելու գործն, առանձնապես վորակի տեսակետից, դեռևս հեռու յե բավարար լինելուց: Տեղերի հողբաժինների, կուսկազմակերպությունների, կինսեկտորների թույլ աշխատանքի հետևանքով միանգամայն անբավարար է յեղել կանանց թիվը բրիգադավարների, հաշվետարների, կոլտնտեսություն նախագահների զասրնթացքներում: Իրա հետևանքով, ինչպես և կանանց աշխատանքի թերազնահատման պատճառով մենք չունենք Հայաստանում կոլտնտեսություն փոշ մի կիննախագահ, ինչպես և բրիգադավարներ: 1934 թ. գյուղատնտեսություն առաջ դրված խնդիրները պահանջում են, վորպեսզի տեղերում՝ շրջկենտրոններում բացվող՝ կոլտնտեսություն նախագահների, բրիգադավարների, հաշվետարների, ազրոտեխնիկների և այլ զասրնթացքներում կանայք ավելի մեծ չափով ընդգրկված լինեն: Անհրաժեշտ է, վորպեսզի տեղերում վերացնեն այս խնդրին ձևական մոտեցում ունենալը:

5. Կույսիեցաղային աշխատանքների բնագավառում

ա) Նշելով այն հաշոդությունները, վոր ունեցել ենք 1933 թ. ընթացքում մսուրների, հրապարակների ցանցի լայնացման ուղղությամբ, խորհրդ-

դակցութիւնը միաժամանակ նշում է, Վոր դեռևս վատ է դրված մտւորների, հրապարակների, սննդի գործը, անբավարար է սանիտարական դրութիւնը, թույլ է մանկհիմնարկների կազմը: Այս տարի բոլոր հնարավորութիւնները կան (կոլտնտեսութիւնների առատ բերք և այլն), վորպեսզի կուս. շրջկոմները, քաղբաժինները, հողբաժինները, լուս. և առբաժինները, կոոպկազմակերպութիւններն այս ուղղութիւնով տանեն ուժեղ աշխատանք՝ լավ մտւորներ, հրապարակներ ունենալու համար: Մանկ. հիմնարկները պետք է անպայման ապահովել հարմար շենքերով և անհրաժեշտ կահավորմամբ: Մանկ. հիմնարկների սննդի գործը լավ հիմքերի վրա դնելու համար տեղերում ստեղծել ֆոնդեր, ապահովել կովերով, թուչուններով, մտածել ձեռք բերելու տնտեսութեան այլ միջոցներ: Լուսբաժնի և առբաժնի միջոցով պատրաստել մանկհիմնարկների համար զեկավարներ, նրանց զարձնել ավելի մնայուն, յերկարատև աշխատանքի համար, պայքարելով նրանց հոսունութեան դեմ: Քաղբաժնի կին. կազմակերպչուհիները, շրջկոմի կինսեկտորավարները պետք է այս ուղղութիւնով աշխատանք տանեն կազմակերպելու և լայն հիմքերի վրա դնելու մանկ. հիմնարկների գործը՝ ապահովելու համար կանանց լայն մասնակցութիւնը գարնանացանի և հետագա այլ աշխատանքներին:

բ) Թույլ է կազմակերպված տեղերում կանանց անգրագիտութեան վերացման գործը (հատկապես ազգային փոքրամասնութիւնների՝ բրդուհիներ, թրքուհիների մեջ): Տեղերում առանձնահատուկ մտտեցում չի յեղել կանանց լիկկայաններում լրիվ բնդ-

գրկելու, թաղամասերում խմբակային, անհատական պարապմունքները կազմակերպելու գործում: Այս աշխատանքները կատարելու համար հարկ յեղածին չափ մորիլիզացիայի չեն յենթարկված յեղել մեծահասակ աշակերտութիւնը, կոմյերիտմիութիւնը և գյուղի այլ կուլտուրական ուժերը: Կանանց անգրագիտութիւնն արգելք է հանդիսանում արտադրութեան մեջ վորակյալ աշխատանքներ կատարելու, նրանց զեկավար աշխատանքի ներգրավելու գործին: Այժմ ավելի քան անթույլատրելի յե անգրագետներ ունենալ աշխատավոր կանանց՝ կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների մեջ: Իրա համար պետք է տեղերում բոլոր միջոցները ձեռք առնել մորիլիզացիայի յենթարկելու ուսուցչութիւնը, կոմսոմոլը, դպրոցականները և այլ կուլտուրական ուժերը—լայն չափերով կազմակերպել կանանց խմբակային, անհատական, թաղային պարապմունքները, ապահովել տեխնիկական պայմանները կանանց մեջ անգրագիտութիւնը հաջողութեամբ վերացնելու համար:

գ) Հատուկ աշխատանք կատարել աշխատավոր կանանց շրջանում տարածելու թերթեր, ժուռնալներ և այլ մատչելի գրականութիւն: Անհրաժեշտ է կոլտնտեսային ակումբներին կից, ինչպես և անհատական ձևով ոգտագործելու համար ստեղծել մատչելի գրագարաններ՝ կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների համար: Անհրաժեշտ է կոլտնտ. ակումբներում կազմակերպել բարձրագույն ընթերցանութիւն կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների համար՝ ընտրոված մատչելի գրականութիւնից համապատասխան նյութերի շուրջը:

դ) Մամուլը շարունակում է անբավարար չափով

լուսանել կանանց մեջ ծափալվող արտադրական, քաղմասսայական աշխատանքները: Թույլ են լուսաբանվում շրջանային և ՄՏԿ քաղբաժինների թերթերում լավագույն հարվածային կանանց աշխատանքները, չեն փոխանակվում նրանց սոցիալիստական աշխատանքի նոր ձևերը մամուլի միջոցով: Տեղերում կինսեկտորների վարիչները, կինկազմակերպչուհիները և թույլ են աշխատել՝ լուսաբանելու մամուլում կանանց մեջ կատարվող աշխատանքները: Այս պատճառով մեր լավագույն հարվածային կոլտնտեսուհիները մնում են անհայտ աշխատավոր լայն մասսաների համար: Անհրաժեշտ է տեղերում գործը կազմակերպել այնպես, փոր ափելի լայն չափով լուսաբանվեն կանանց մեջ տարվող աշխատանքները: Կինսեկտորի վարիչները, կինկազմակերպչուհիները պետք է տեղերում կազմակերպեն թղթակիցների աշխատանքը՝ նրանց միջոցով մասսայականացնելու կանանց մեջ կատարվող աշխատանքները: Հայնածավալ աշխատանք տանել կանանց մեջ տարածելու թերթերը, ժուռնալները, առանձնապես «Հայաստանի Աշխատավորուհին», «Սոցգյուղը» և այլն:

դ) Պետք է արձանագրել, փոր չափազանց թույլ է յեղել քաղմասսայական, կուլտկենցաղային աշխատանքը ազգային փոքրամասնության կանանց մեջ: Անգրագիտության վերացման գործը չափազանց վատ դրուժյան մեջ է գտնվում: (Անգրագետ թրքուհիների չնչին մասն է ընդգրկված լիկկայաներում, նույն դրուժյան մեջ է նաև քրդուհիների անգրագիտության վերացման գործը): Ազգային փոքրամասնության կանանցից կադրեր պատրաստելու խնդրին տեղի կուս. կազմակերպչությունների կողմից

հատուկ ուշադրություն չի դարձվել: Քաղցանցում չափազանց աննշան է ազգային փոքրամասնությունների կանանց թիվը: Այս բացերը վերացնելու համար անհրաժեշտ է, փոր կինսեկտորի վարիչները և քաղբաժնի կինկազմակերպչուհիներն առաջիկա 34 թ. ընթացքում հատուկ աշխատանք տանեն թրքուհիների, քրդուհիների անգրագիտության վերացման գործը անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու համար: Հատկապես կոլտնտեսության արտադրական, վարչատնտեսական աշխատանքների համար նախատեսված շրջանային դասընթացներում ապահովել ազգային փոքրամասնության կանանց տոկոսը. համապատասխան շրջաններում կազմակերպել հատուկ դասընթացներ՝ անգրագիտության վերացման, մանկ. հիմնարկներում աշխատելու համար թրքուհիներից, քրդուհիներից կադրեր պատրաստելու, ինչպես և կոլտնտեսությունների արտադրական, վարչատնտեսական աշխատանքներում առաջ քաշելու համար:

ե) Քաղխմբակներում, ինչպես և այլ բարձր տիպի դպրոցներում կանանց տոկոսը դեռ աննշան է (2—5 տոկոս): Կանանց լայն մասսաները մարքսլենինյան դաստիարակության քաղցանցում ընդգրկելու նպատակով անհրաժեշտ է տեղերում այս ուղղությամբ հատուկ աշխատանք տանել՝ ապահովելու կանանց տոկոսը քաղդպրոցների ցանցում:

Բոլոր կուսկազմակերպչությունները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները և հնարավորությունները՝ ուժեղացնելու կանանց մեջ կատարվող աշխատանքները, փորպեսզի 2-րդ հնգամյակի 2-րդ բոլշևիկյան գարնանացանի և այնուհետև գյուղատնտեսական բոլոր աշխատանքների ընթացքում աշխատավոր կանայք՝ կոլտնտեսուհիները, մենատնտեսուհիներն առավելագույն չափով համախմբված լինեն կուսակցության շուրջը՝ կենսագործելու գյուղատնտեսության պլանների կատարումը:

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

29.895



« Ազգային գրադարան »



NL0209824

### РЕЗОЛЮЦИЯ

Республиканского совещания жен-  
организаторов политотделов МТС  
и жен. секторов райкомов от 10—12  
декабря 1933 г.

Партиздат 1934 Эривань